

որուն կեդրոնը կը բռնէ մեծադիր պատ-
տառը եւ Գողգոթային, եւ երկու կող-
մերը՝ Ձաղկումը եւ Փշկասկումը։ Նկար
մը չէ ատիկա։ Հոն ամբողջապէս կեանքի,
տառապանքի, մարդկային անտարբերու-
թեան, ու ցաւի դերմարդկային ողբեր-
գութիւնն է որ կը տիրէ եւ կ'աղղէ հողե-
ին։ Հոն դոյնի, շարժումի բովանդակ ճար-
տասանութիւնը կայ, խորապէս ուժգին,
մանաւանդ կեդրոնի նկարին մէջ, ուր իւ-
րաքանչիւր դէմք հողեբանութիւն մըն է,
եւ ուր Քրիստոսի անկումը գետին՝ խա-
չին ծանրութեան տակ կ'ընկնէ՝ մեղքի բոլոր
վերցնող խաղաղ ու համակամ արտայայ-
տութեան հետ, ցաւի ու տառապանքի ա-
հաւորութիւնը կը ցոլացնէ իր աստուա-
ծաշնորհ դէմքին վրայ։ Բնութիւնն իսկ
զարհուրած է այդ տեսարանէն, մարդկա-

յին անդթութեան և աստուածային սիրոյ
պայքարին առջեւ։ Հոն կարծէք ամբողջ
իրական աշխարհ մը ներկայ է, մանա-
ւանդ խռովեալ Երուսաղէմը իր ժխորով,
իր մոլեռանդն կատաղութեամբ, ստեղծե-
լով վայրագ իրարանցում մը խոնարհ ու
քաղցրահայեաց Յիսուսին շուրջ։ Գոյնի
բանաստեղծութիւն մ'ալ կայ հոն, խառ-
նուրդ զօրաւոր ու թեթեւ դոյներու, լոյս-
երանդներու, մթին ու թերաստուերային
միութիւններու խառնուրդ մը, որ խոր-
հըրդաւորութիւնը կ'աւելցնէ ստեղծուած
ահաւոր տեսարանին։

Թիէփոլոյ նկարիչներուն բանաստեղծն
է, եւ ԺԸ դարու բանաստեղծներուն սրտի
բանալին։

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ



ՃԻԱՄՊԱԹԹԻՍԹԱ ԹԻԵՓՈԼՈՅ. - ԵՐԸ ԳՊՊՊՐԱՅԻ.

ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԳԵՂԱՐՈՒԵՍԻ
ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

ՓՐՈՓ. ԵՂՈՒԱՐԴ ԵՓՐԵՄԵԱՆ

Փրոֆ. Եղուարդ Եփրեմեան՝ ջութակա-
հար, վկայեալ վենետիկոյ «Պէնէտէթթոյ
Մարչելլոյ» Երաժշտանոցէն, նախկին
Մուրատ-Ռափայէլեան մըն է, որ ծնած է
Գահիրէ 1925-ին և մտած վար-
ժարան 1938-ին։ Իր մանուկ հա-
սակէն կը գուշակուէր արդէն անոր
փայլուն ապագան։ Եօթը տարե-
կանին սկսած է սորվիլ դաշնա-
մուր և զոր զարգացուցած է Մու-
րատ-Ռափայէլեանի չորս տա-
րուան ընթացքին, այն աստիճան՝
որ յաճախ նուագահանդէսներ կու-
տար տօներու առթիւ վարժարա-
նին դահլճին մէջ։ Վարժարանին
վերջին տարին զարմանալի երե-
ւոյթ մը տեղի կ'ունենայ իր մէջ.
դաշնակահարը կը դառնայ ջու-
թակահար։ Սիրահարուած այդ
մոգական ճպտոյն, գերազանցօրէն
երաժշտական իր խառնուածքով,
նախ ինքնաշխատութեամբ, յետոյ
շատ կարճ ատեն մը Փրոֆ. Էթ-
թորէ Քասսելլարիի առաջնորդութեան
տակ, յանկարծ երեւան եկաւ փոքրիկ
վիրրուոյ մը, որ ապագայ կը խոստանար։
Իննամիս հակումի յայտնութիւն մը եղաւ
ատիկա։ Նոյն տարւոյն ամսվերջի քննու-
թեան, երբ Տեսչութիւնը հանեց զինքը
հանդիսականներու առջեւ քանի մը կտոր-
ներով իր մատներուն ճարտարութիւնը
ցոյց տալու, հիացմունքը հանրական էր ի
տես այն յաղթանակին՝ որ կը տանէր այդ
պատանի դպրոցականը, վեց ամսուան ըն-
թացքին ձեռք բերուած վարժութեամբ ներ-
կայանալու բազմութեան մը առջեւ և նուա-
զելու մեծագոյն վարպետներու զօրծերը։



Փրոֆ. Եղուարդ Եփրեմեան

ատիկա։ Աւարտած տարին իսկ արձանա-
գրուեցաւ Դեղագործութեան ընթացքին՝
Փատուայի համալսարանը, որուն չորս
տարի հետեւէ վերջ՝ ստիպուեցաւ ընդ-
հատել՝ մեկնելու համար 1946-ին Ե-
րուսաղէմ։ Պատերազմը վերջացած էր
այլեւս, ու ինքը երկար տարիներով ան-
շատուած իր սիրելիներէն, կը մաշէր ա-
նոնց կարօտով։

1949-ին վերագարձաւ Խաղիա Դե-
ղագործութեան ընթացքը շարունակելու
նպատակով, և միանգամայն զարգացնելու
իր երաժշտական ուսումները։

1950-ին Մարտ 14-ին իր բնակու-

Թիւնը կը հաստատէր Մուրատ-Ռափա-
յէլեան վարժարանը, յատուկ առանձնա-
շնորհութեամբ Միլիթարեան Միաբանու-
թեան, որ իր սիրելի և երախտագէտ սա-
նին մէջ կը տեսնէր խոստումնալից ա-
րուեստագէտ մը, որ արժանի էր ամէն
քաջալերանքի և ամէն աջակցութեան :
Եղուարդ Եփրեմեան կը դառնար այսպէս
Վենետիկ, այն զեղարուեստական քա-
ղաքը, լոյսի ու զոյնի և երաժշտութեան
քաղաքը, որ խոր տպաւորութիւններ թո-
ղած էր արդէն անոր երեւակայութեան
մէջ : Երկար չտեսնեց ընթացքը, մանաւանդ
թէ պահանջուածէն շատ կարճ. տասնը-
չորս ամսուան մէջ մնացած եօթը տարի-
ներու ուսումը լրացուց իր նախասի-
րած փրոֆէսորին՝ Լեթիցի Գասսելարի
ձեռքին տակ, և 1951 Յունիս 25-ին
վերջնական քննութիւնը տալով՝ ամենամեծ
յաջողութեամբ աւարտեց և ստացաւ իր
Վկայականը : Այդ վերջնական քննութեան
նիւթերը կ'ընտրէր Պախէն, Մոզարթէն,
Վիվալտիէն, Պէթովէնէն, Գորելլիէն, Բա-
կանինիէն, Թարթինիէն, Մարքս Պրիւքէն,
Ֆրանչեսքոյ Կուարնիէրիէն : Քննութեան
յանձնախումբին նախագահ՝ Լուիճի Ֆերրոյ
փրոֆէսորը կը գտնէր նորաստեղծ փրո-
ֆէսորին քով բացառիկ տաղանդ մը, որ
իր մէջ կը միացնէր գիտակից « Թէքնիք »-ի
մը հետ՝ արեւելցիի ուժեղ զգայնութիւնը :

Հիմա որ ան վերադարձած է արդէն
Եգիպտոս՝ վայելելու իր աշխատութիւն-
ներուն պտուղը, կը մաղթենք իրեն փայ-
լուն ասպարէզ մը նորանոր նուաճու-
մաներու :

Հ. Մ. Ճ.

ՓՐՈՖ. ԱԳՆԷՍ ՄԻԼՏՈՆԵԱՆ

Այս տարի « Պէնէտէթոյ Մարչելլոյ »
Վենետիկի Երաժշտանոցէն շրջանաւարտ
կ'ելլէր նաեւ Օր. Ագնէս Միլտոնեան :
Շնորհալի օրիորդը իր տասնեւինամեայ



Փրոֆ. Օր. Ագնէս Միլտոնեան

տարիքին մէջ փայլուն յաղթանակ մ'էր
որ կը տանէր, ուրախութիւն պատճառե-
լով իր ծնողներուն, ազգականներուն և
բոլոր ծանօթներուն : Օր. Ագնէս կը ստա-
նար Դաշնակահարուհիի վկայականը ինը
տարուան ընթացքէ մը վերջ, մտնելով
1942-ին Վենետիկեան Երաժշտանոցը,
տարի մը առանձնական դասեր առնելէ
յետոյ իր հայրենի տան մէջ : Դաշնամուրի
իր ուսուցչապետը եղած է անուանի Ճինոյ
Կորինի, որ իր աշակերտուհիին մէջ գտած
է եզական ձիրք մը, և հոգեկան լայն
տրամադրութիւն մը երաժշտութեան հան-
դէպ : Վերջնական քննութեան որ տեսած
է ժամ մը, հայ օրիորդը նուազած է.
Bach-Busoni-ի « Fantasia cromatica
e Fuga »-ն, Ravel-ի « Sonatina »-ն, Cho-
pin-ի « Notturmi », op. 27. n. 1. 2; op. 32.
n. 1, Saint-Saëns-ի Les cloches de las
palmas, Béla Bartók-ի « Suite » op. 14,

Յանձնախումբի մը առջեւ որ կը կազմուէր
Ճինոյ Կորինի, Սերճիոյ Լորենցի, Էուճե-
նիոյ Պանեոլի և Էլէոնորա Փախի փրո-
ֆէսորներէն :

Օր. Ագնէս, զաւակն է Մ. Ռ. Նախկին
սան պր. Արտաւազ և տիկին Վիրգինէ
Միլտոնեաններուն, Վենետիկի փոքրաթիւ
հայ զաւուրի պատուական ընտանիքնե-
րէն, ուր երաժշտութիւնը օրուան ամենա-

սիրելի զբաղանքն է տան փոքրերուն :
Շրջանաւարտ օրիորդին միւս քոյրերն ալ,
մին թաջութակի և միւսը տալիդի հետ
կապած իրենց սիրտն ու միտքը, պիտի
հետեւին իրենց երէց քրոջ օրինակին :

Զերմագին խնդակցութիւններ Օր. Ագ-
նէսին և իր ընտանեկան պարագաներուն :

Հ. Մ. Ճ.

ՏՐՏՈՒՄ Է ՀՈԳԻՍ

Ինչքան տրտում է, Աստուած իմ, եւ ցուրտ հոգիս,
Սա բագմամբոյ փողոցներէն վերադարձիս.
Իմ մէջ աշխարհ մը կայ ինձի միշտ անձանօք,
Որուն ո՛րքան մտեմանամ՝ ա՛յնքան է աղօտ :

Աղօտ ու մռայլ գիշերիս մէջ ես սիրակամ՝
Առանց յոյսի մ'աչքերուս խորն՝ ահա՛ կ'երբամ
Տառապանքի սա լըպըրծուն ուղիներէն,
Որ ո՛վ գիտէ ո՞ւր պիտ' յանգին տարտամօրէն :

Ուղին լայն է, ժըխորն հսկայ ու տարփագին,
Որուն անգէտ հետեւեցայ խուլ հոսանքին,
Հիմա որ ա՛լ դարձած եմ ես իմ կայանիս,
Դեռ կը զգամ տենդն անոր՝ որ հեւք կու տայ կուրծքիս :

Հոգեհանգի՛ստն, ա՛հ, կ'երանեմ ես յաւիտեան,
Խաղա՛ղ, անկիր՝ ո՛չ ծոցին մէջ դաժան մահուան.
Հոգեհանգիստ մը որ բանայ ինձ լայնարձակ
Խորհող մտքիս հորիզոններն անպատրուակ :

Ո՛հ, այն ատեն կ'ապրիմ, կ'ապրիմ ես իսկապէս
Ե՛ւ տենդն հոգիս, ե՛ւ սէր մարդուն՝ Արարչին պէս,
Որ հեռու է եւ մօտ, մեր մէջ իսկ ներգործող :
Մարդէն հեռու, կը սիրեմ ես մարդն առինքնող :

ԱՐՄԱՆԻՐԵԱՆ